Արձանագրություն N 3

ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար օդորակիչների և սառնարանների ձեռքբերման նպատակով կազմակերպված
ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-24/27 ծածկագրով գնման ընթացակարգի
/այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

17 հուլիսի 2024թ.
ժամը՝ 14:30

ք. Երևան, Բաղրամյան 19

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Թորոսյան*, Ա.Էալայան, Վ.Մացակյան, Մ.Սամսոնյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Սաղաթելյան

* Վ.Թորոսյանը բացակայում է նիստից

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված գնման գների վերաբերյալ

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)
1	օդորակիչ, 9000 BTU	3000000
2	կենցաղային սառնարաններ	500000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 15.07.2024թ.-ին ժամը 14:30-ին:

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 16.07.2024թ.-ին ժամը 14:30-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների փվյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Գործունեության հասցեն	Էլ. հասցե	Կապի միջոցներ
1	ՆԱՌ-ԱՎ ՍՊԸ	ք. Երևան, Բաշինջաղյան 159/46	tender-viva@mail.ru,	+37433022537
2	ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ	ք.Երևան, Գ. Նժդեհի21	vlvtender@gmail.com	+(37410)449968
3	Փրիթի Ուեյ ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Ծովակալ Իսակովի 48/1	b2bvesta@gmail.com,	+37477723135
4	ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ ՍՊԸ	Ք. Երևան, Խորենացի փ., շ.72/12	h_davo@mail.ru	+37477474006
5	ՖՈՒԴՍԻԹԻ ՍՊԸ	ք. Երևան, Նոր Նորք 0090,Գայի պ./Շ/11/20	FOODCITYAVAN@yandex.ru	055755455

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-24/27 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների, հրավերում կատարված փոփոխության մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:
04.07.2024թ., կատարվել է Հրավերի փոփոխություն:

6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Գնառաջարկներ

Չ/հ	Զբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	1	ՆԱՌ-ԱՎ ՍՊԸ	3000000	2550000	20 %	3060000	1737500	20 %	2085000.00	
1	2	ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ	3000000	2500000	20 %	3000000	1900000	20 %	2280000.00	
1	3	Փրիթի Ուեյ ՍՊԸ	3000000	2499300	20 %	2999160	1925000	20 %	2310000.00	
1	4	ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ ՍՊԸ	3000000	2777777	20 %	3333332.4	2777777	20 %	3333332.40	Մերժված
1	5	ՖՈՒԴՍԻԹԻ ՍՊԸ	3000000	99000000	20 %	118800000	99000000	20 %	118800000.00	Մերժված
2	1	ՆԱՌ-ԱՎ ՍՊԸ	500000	420000	20 %	504000	415800	20 %	498960.00	
2	2	ՖՈՒԴՍԻԹԻ ՍՊԸ	500000	99000000	20 %	118800000	99000000	20 %	118800000.00	Մերժված

Աճուրդն ամփոփվել է 16.07.2024 թվականին: Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից Համակարգի կողմից համարվել է ՆԱՌ-ԱՎ ՍՊԸ-ն:

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով eauction.armeps.am համակարգի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ ՆԱՌ-ԱՎ ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/, արձանագրեց՝

- **ՆԱՌ-ԱՎ ՍՊԸ-ի** կողմից ներկայացրած հայտում առկա են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝

- Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում՝ /Հավելված 1/ 1-ին կետում ներկայացվել է Հրավերի պահանջներին անհամապատասխան՝ թերի տեղեկատվություն, մասնավորապես՝ «1) բավարարում է ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում» նախադասությունը անհրաժեշտ է խմբագրել նշելով՝ «1)

«ՆԱՌ-ԱՎ ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-24/27 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և ՆԱՌ-ԱՎ ՍՊԸ-ն պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում»:

- eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ «Ապրանքային նշան» և «Արտադրող» սյունակները ենթակա են շտկման, անհրաժեշտ է նկարագրել /նշել/ առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը և արտադրողը: «Տեխնիկական բնութագիր» սյունակում 1-ին չափաբաժնում «աշխատանքային մակերեսը», «օդի շրջանառ.», «ջեռուցման հզորությունը», «սառեցման հզորությունը», «երաշխիքային ժամկետը» հատկանիշներում՝ ապրանքի նկարագրում առկա է «առնվազն» բնութագրիչները, մինչդեռ անհրաժեշտ է հստակ նշել առաջարկվող ապրանքի հատկանիշները: «Տեխնիկական բնութագիր» սյունակում 2-րդ չափաբաժնում «ընդհանուր ծավալը», «չափսերը», «երաշխիքային ժամկետը» հատկանիշներում՝ ապրանքի նկարագրում առկա է «առնվազն» բնութագրիչները, մինչդեռ անհրաժեշտ է հստակ նշել առաջարկվող ապրանքի հատկանիշները: Օգտակար ծավալը (90-95լ) նշված է միջակայքով, սակայն անհրաժեշտ է ծավալը հստակ նշել:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, Հանձնաժողովը որոշեց 17.07.2024թ. նիստը կասեցնել՝ Համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակից ՆԱՌ-ԱՎ ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝0:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 19.07.2024թ. ժամը 14:30-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վարդան Հարությունյան

անդամներ՝ _____ Անժելա Լալայան

_____ Վահան Մացակյան

_____ Մերուժան Սամսոնյան

քարտուղար՝ _____ Հերմինե Սաղաթելյան